

Գուրգեն համառօտ մը եղածը եւ առած տեղեկութիւնքը պատմելէն վերջ.

— Զիմա, իմ կարծիքս էլ զրուցեմ եւ դուք էլ ձեր որոշմունքը յայտնեցէք, վասնզի ժամանակ չունինք կորսնցնելու, ետ դառնալ ինձ անկարելի կը թուի, ուստի պէտք է առաջ անցնիլ եւ եթէ յարկ լինի մեր ճամփան արգիլողներուն վրայէն կոխելով անցնիլ: Ես այս յոյները կը ճանչեմ: Ինչպէս դու էլ Յովնան, ոչ երբեք ամուր գինուոր են, ինչպէս խօսելու նոյնպէս փախչելու մէջ վարպետ են, իսկ յաջողութեան մէջ յիմար եւ ամբարտաւան, իրենք մեր վրայ չի յարձակած մենք յարձակինք նոցայ վրայ Արամանեակի եւ մեր մէջ զիրենք պաշարենք, եւ յաղթութիւնն ապահով է:

— Բայց ինչա՞րի է այս հուն աս գնդին թիւը,— հարցուց Խոսրով Ակեացի,— գոնէ այդ իմանայինք:

— Կալանաւորն երէ առած տեղեկութեանս նայելով՝ շատ չեն, երեք հազարէ մինչեւ հինգ հազար առ առաւելն, յունաց մեծաբանութեան էլ եթէ բաժինն հանենք՝ երեք հազար նաեւ չկարծեմ թէ յինին, վասնզի այս ազգը միշտ մեծ եւ բարձրեն կը խօսի:

— Իշխանիկի զօրքն ինչա՞րի կը կարծես,— հարցուց դարձեալ Խոսրով:

— Զարիւր, շատ, շատ երկու հարիւր հոգի, բայց ընտիր տղամարդիկ են, ես զիրենք կը ճանչեմ:

— Ի՞նչ կեռեր ենք ուրեմն,— գոչեց Աշոտ,— երթա՛նք, ժամանակ չի կորսնցնենք:

— Բայց Յովնան, դու բան չես խօսիր,— ըսաւ Գուրգեն:

— Տղոց քիչ մը կերակուր հրամայենք եւ յարձակինք,— ըսաւ Յովնան եւ ելաւ երթալու զօրաց քով: